№ 72 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 25 **1894** ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 25 № 72

ՔԱՌԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր պատրիարքի ընտրութիւնը. Ընտրող և հաստատող.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընտրութիւնների շուրջը. Տեղեկութիւններ խօլէրայի և ժանտախտի մասին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կարնոյի սպանութեան մանրամասնութիւնները. Ֆրանսիական մամուլը և Պէրիլ: Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սովեալների մէջ:

## ՆՈՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Թիւրքաց սուլթանը վերջապէս ընդունեց Աշըգեանի հրաժարականը, և այդպիսով Թիւրքաց հայերը ազատվեցին Աշըգեանի նման հակակրելի, վնասակար և նոյն իսկ վտանգաւոր պատրիարքից:

Այժմ բնականաբար հրապարակ է գալիս նոր պատրիարքի ընտրութեան հարցը:

Ով կը լինի նոր պատրիարքը,—ահա մի կարևոր հարց: Սակայն մեր խօսքը այս անգամ այդ մասին չէ, այլ այն մասին, թէ ի՞նչպէս կընտրվի նոր պատրիարքը, կամ ուրիշ խօսքով՝ ո՞վ պէտք է ընտրի նոր պատրիարք՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքական աթոռի համար:

Թիւրքաց հայերի սահմանադրութեան զօրութեամբ, որը արդէն աւելի քան 30 տարի գոյութիւն ունի, պատրիարքի ընտրութիւնը կատարվում է Ազգային ժողովի ձեռքով: Տարաբաղդաբար, Ազգային ժողովը մի քանի տարի է արդէն, Աշըգեանի և իր բարեկամների շնորհով, գոյութիւն չունի, և այդպիսով խնդիրը ստանում է շատ կնճռոտ և կասկածելի կերպարանք:

Աւելի կասենք. Թիւրքաց կառավարութիւնը առաջարկել է, որ խառն ժողովի զումարվի պատրիարքի ընտրութիւնը կատարելու համար, որ, ուրիշ խօսքով, կը նշանակէ վերջնականապէս տապալել սահմանադրութիւնը և ոչնչացնել այն իրաւունքները, որ Թիւրքաց հայերը վայելում էին 30 տարուց ի վեր:

Սահմանադրութեան զօրութեամբ, Ազգային ժողովն է պատրիարքի ընտրողը և խառն ժողովը միանգամայն իրաւունք չունի կատարելու մի այդպիսի մեծ և կարևոր գործ: Եւ եթէ խառն ժողովի թէ աշխարհական և թէ հոգևորական անդամները չեն հրաժարվի այդ քայլից և իրանց թոյլ կը տան պատրիարքական ընտրութիւն կատարել՝ նրանք դրանով ոտի տակ կը տան սահմանադրութիւնը, որին երդվել են հաւատարիմ լինել:

Մենք չենք հաւատում, որ խառն ժողովի անդամները, թէ աշխարհական և թէ հոգևորական, այն աստիճանի ստորութեան հասնեն, որ դաւաճանեն սահմանադրութեանը: Ընդհակառակն, մենք յոյս ունենք, որ նրանք գէթ մի անգամ քաջութիւն կունենան ճանաչելու իրանց իրաւունքների սահմանները, որպէս զի ազատեն Թիւրքաց հայերի սահմանադրութիւնը վերջնական կործանումից:

Նոր պատրիարքը միայն այն ժամանակ կարող է համարվել Թիւրքաց հայերի պատրիարք, երբ ընտրված կը լինի Ազգային ժողովի ձեռքով, ապա թէ ոչ նա կը լինի ոչ թէ ընտրված պատրիարք, այլ նշանակված պաշտօնեայ:

Պէտք է Ազգային ժողով գումարել:

## ԸՆՏՐՈՂ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՂ

Մեր ընտրողական գործի մէջ կայ երկու մարմին.—ընտրող և հաստատող:

Ո՞վ է ընտրողը.—ամբողջ ժողովուրդը կամ նրա մեծ մասը:

Ո՞վ է հաստատողը.—իշխանութիւնը կամ նրա մի որ և է ներկայացուցիչը:

Բայց ի՞նչ կը նշանակէ ընտրութիւն.—ամբողջութեան կամ մեծամասնութեան ցանկութեան արտայայտութիւն:

Ի՞նչ կը նշանակէ հաստատել.—կը նշանակէ ճանաչել ամբողջութեան կամ մեծամասնութեան ցանկութիւնը:

Ահա դրանք են ընտրողական գործի այբբենական, տարրական, հիմնական սկզբունքները, որոնցից շեղվելը՝ կը նշանակէ խախտել, ոչնչացնել նոյն իսկ ընտրողական գործը, կը նշանակէ խլել մի կողմի, ընտրողների իրաւունքը, և տալ միւս կողմի՝ հաստատողի ձեռքը:

Եթէ ամբողջ ժողովուրդը, ամբողջ ազգը կամ նրա մի մասը, մի համայնք, վերջապէս ծխականների կամ ընտրողների մի ժողով՝ ձայնաւորութեամբ յայտնում է իր կարծիքը, իր կամքը, իր ցանկութիւնը, կը նշանակէ ընտրութիւնը արդէն կատարված է, և պէտք է ճանաչել, ընդունել, հաստատել այդ ընտրութիւնը, կամ ուրիշ խօսքով՝ ճանաչել կատարված իրողութիւնը:

Երբ ասում ենք, թէ պէտք է հաստատել կատարված ընտրութիւնը—այդ չէ նշանակում, որ հաստատող կողմը, կամ ուրիշ խօսքով, իշխանութիւնը մի կրաւորական մարմին, մի կոյր գործիք է, որը առանց մի խօսք ասելու, առանց քննելու, առանց դատելու՝ պարտաւոր է տալ իր սանկցիան, և ճանաչել կատարված իրողութիւնը:

Ոչ: Իշխանութիւնը, հաստատող մարմինը ևս ունի իր սեփական կամքը,—որը նա միշտ պէտք է պաշտպանի և արտայայտի,—դա նրա տուած օրէնքը կամ կանոնն է:

Եւ հէնց այդ օրէնքը կամ կանոնն է, որ որոշում է երկու կողմերի՝ ընտրողների և հաստատողի յարաբերութիւնները, թոյլ չը տալով, որ մի կողմը անտես առնի միւսի իրաւունքները, և արդարութեան փոխարէն՝ գործ դնի ճնշում, բռնութիւն, կամայականութիւն:

Պարզենք մեր միտքը, և իբրև օրինակ, վերցնենք ծխական պատգամաւորների ընտրութիւնը, որ այս օրերս կատարվեց Թիֆլիսում:

Ընտրութիւններ նշանակող մարմինը, որ մի և նոյն ժամանակ հաստատող մարմինն է, այն է հոգևոր իշխանութիւնը՝ նախօրօք որոշում է կանոններ այդ ընտրութիւնների համար, կանոններ, որոնք համապատասխանում են և պէտք է համապատասխանեն թէ ընդհանուր պետական օրէնքներին, և թէ հայոց եկեղեցու ընտրողական ընդհանուր կանոններին:

Դա իշխանութեան իրաւունքն է:

Լաւ են թէ վատ այդ կանոնները, լիակատար են, թէ թերի,—այդ ուրիշ խնդիր է: Ընդունենք, որ այդ կանոնները կան և առաջարկվում են՝ ի գործադրութիւն:

Շատ լաւ: Ժողովուրդը իշխանութեան կողմից նշանակած օրը և ժամին հաւաքվում է եկեղեցի. նիստը բացվում է իշխանութեան ներկայացուցչի ձեռքով, և ընտրութիւնը կատարվում է ճիշդ այնպէս, ինչպէս որոշված է իշխանութեան կանոնների մէջ, առանց շեղվելու այդ կանոններից, առանց խախտելու նրա որ և է կէտը:

Ընտրութիւնը վերջացած է. արձանագրութիւնը կազմված է: Ծխականները ցրվում են, և մի քանի օր շարունակ, նոյն իսկ շաբաթներ, փողոցում, տանը, թատրոնում, միմեանց հանդիպելիս, ամենքն էլ միմեանց մի և նոյն հարցն են տալիս. „արդեօք ընտրութիւնը կը հաստատվի՞, թէ կը բեկանվի“:

Այդպիսով առաջ է գալիս մի այսպիսի դրութիւն.—թէև ընտրութիւնը կատարված է միանգամայն այն կանոնների համապատասխան, որ տուել է իշխանութիւնը, թէև իշխանութեան օրէնքը և կանոնները մազի չափ անգամ չեն խախտված, բայց և այնպէս իշխանութիւնը կարող է չը հաստատել, բեկանել ընտրութիւնը:—Ի՞նչու: Որովհետև այդպէս է ցանկանում իշխանութիւնը:

---

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՄԷՋ

I.

Աւելի քան 400 ալաշկերտցիներ եկել լցվել են Էջմիածին,—ահա այն լուրը, որ տպված էր լրագիրների մէջ դեռ անցեալ տարվայ հոկտեմբեր ամսին:

Ուրեմն այն գաղթականութիւնը, որով զբաղված են բոլոր կովկասցիները և որ լցրել ու լցնում է Արարատեան ու Կարսի նահանգները, ըսկսվել է անցեալ տարվայ աշնան օրերից, շարունակվեց ամբողջ ձմեռը և դեռ տևում է: Եթէ նա այնքան աղմուկ չէր հանում սկզբներում, պատճառն այն էր, որ եկողներից շատերը ցրտից ու շատերն էլ քրդերի յարձակումներից չէին կողոպտվում ու ոչնչանում ճանապարհին: Աշնան դեռ հաց կար. եղանակն էլ տաք լինելով, գաղթողները գալիս ցրվում էին գիւղերում և գթասիրտ գիւղացիները խնամում—պահպանում էին նրանց. նրանք դեռ կետրօնացած—խմբված չը լինելով՝ շատ աչքի չէին ընկում: Իսկ երբ եկաւ ձմեռը, սաստկացաւ գաղթողների թրքաց հողի վրա կրած հարուածներն ու քաղցածութիւնից կոտորվելը, այն ժամանակ ամեն կողմից բարձրացան ոչ միայն զայրալից աղաղակներ դէպի աղէտի պատճառները, այլ և ամեն կողմից «սով կայ», «գաղթում են» բառերը առիթ տուին գրգռելու ժողովրդին դէպի բարեգործութիւն: Պէտք էր խնամել մեր թշուառ եղբայրներին, որոնք բացի այն որ հալածվում էին իրանց տուն ու տեղերից, իրանց հողերից և իրանց սիրելի երկրից, այլ և ենթարկվում էին՝ սովի, աւազակների ու կանոնաւոր և անկանոն յարձակումների այնտեղ—բուն երկրում: Պէտք էր երկու բան՝ կերակրել ու խնամել եկողներին, և գաղթականութեան դէմն առնել:

Բայց ամեն մէկը մտածեց առաջինը և մոռացութեան տուեց երկրորդը, մինչ ամենակարևորը հէնց երկրորդն էր:

Այդպէս, Վեհափառ Կաթողիկոսը հրատարակեց մի յուզիչ կոնդակ՝ հրաւիրելով հայ ժողովրդին հաց տալ գաղթողներին. ամեն տեղ սկսեցին փող հաւաքել: Իսկապէս ասած, գաղթականութիւնը, սկսած անցեալ հոկտեմբերից, այնքան շատացաւ և լցրեց Էջմիածինն ու Կարսը, որ նոյն իսկ տեղացիներին սկսեց վնասել, տեղացիներին, որոնք մի քիչ էլ ուրիշ հանգամանքներից վնասված, իրանք էլ սկսեցին սոված մնալ: Գաղթականները կատարեցին այն դերը, ինչ որ չինացիները Ամերիկայում. սպառեցին Արարատի և Կարսի պաշարը, իջեցրին գործաւորական գինը 80—90 կոպէկից 35 կոպէկի և մինչև իսկ այն աստիճանի հասցրին, որ Էջմիածինը, որը ամեն տարի փտած ցորեն էր դուրս թափում, այս տարի սկսել է ցորեն խնդրել եղած տեղերից:

Որ գաղթականութիւնը ունի իր արմատական պատճառը պատմական մի նշանաւոր հանգամանքի մէջ, որի մէջ գտնվում է այժմ Թիւրքահայը—դա ակներև է: Թիւրքաց Հայաստանի դրութիւնը, անկարգ ու անկանոն վիճակը, երկրի անապահովութիւնը, քրդերի ասպատակութիւնները, որոնք ոչ միայն անընդհատ են, այլ և crescendo, վերջապէս անվերջ ու ծանր տուրքերը, մի կողմից էլ պարապիտիզմն ու վաշխառութիւնները՝ էլ կեանք չը թողին Թիւրքահայի մէջ, մղեցին ժողովրդին գաղթելու, դիմելու պանդխտութեան ու չեն թողնում, որ նա մի բոպէ իսկ վատահ տուն կանգնեցնելու և կամ խոփը հողի մէջ մղելու: Անցեալ տարվայ մի քիչ չորութիւնն էլ եկաւ դրա վրա աւելանալու և մղեց նրանց դէպի աւելի ազատ մի հողի վրա պատսպարվելու:

Եւ ահա թողին խոփն ու լուծը, հողն ու տունը, թողին օջախն ու պապերի գերեզմանները, թողին ամեն ինչ. ով կարողացաւ շալակեց իր հետ մի բուռ ուտելիք, առաւ մի քանի տաւար, իր կինն ու որդիները, և քանի աչուն էր՝ գաղթեց, հեռացաւ կարկուտի պէս իրան հասնող հարուածներից, ապաստանեց աւելի ազատ հողի վրա: Աշնան այդ գաղթողներն են ահա, որոնք երևում են որպէս համեմատաբար ունևորներ և կարող դառն կեանքը քիչ էլ քարշ տալու այնտեղ, աւելի ազատ երկնքի տակ:

Կովկասցի հայերը օգնեցին նրանց, պահպանեցին նրանց, այդ գովելի էր, այդ հիանալի էր. բայց ոչ ոք չը մտածեց նրանց ետ դարձնելու, որովհետև ոչ ոք կարող չեղաւ մտածելու, թէ այդպիսի հանգամանքներով օգնելը որպիսի մեծ զարկ տուեց գաղթականութեան հոսանքին, որպիսի զօրութեամբ գնաց ամայացնելու սև հողերը և ստիպելու ժողովրդին բազմութեամբ թողնել այն կողմի փուչ ու տատասկ ունեցող կեանքը և գալ փնտռելու աւելի ազատ, աւելի ապահով մի կեանք:

Եւ այսպէս, արմատական պատճառներին նպաստող հանգամանքները, մանաւանդ վերջերս, եղան նաև մի շարք այնպիսի երևոյթներ, որոնք սկզբում նկատվում էին որպէս գովելի և որոնք, այնու ամենայնիւ, իրանց ձևերով, աւելի զարկ տուին հոսանքի շատանալուն:

Կովկասից այնտեղ՝ Թիւրքաց Հայաստան գաղթող խնամվածները բազմաթիւ նամակներ էին գրում, նամակներ, որոնք գովում, գովաբանում էին կովկասցի հայերի բարութիւնն ու աշխոյժը իրանց եղբայրներին կերակրելու մէջ, որոնք լուր էին տալիս Էջմիածնի, Ալէքսանդրօպոլի և Կարսի մէջ բաժանվող առատ ցորենի, ալիւր և լաւ կերակուրներ մատակարարող ճաշարանների մասին, որոնք նկարագրում էին, թէ ինչպէս նամակ գրողները պատսպարվում են սիրով և կերակրվում և ոչ ոք չէ յորդորում նրանց՝ ետ դառնալու: «Եկէք—ասում է մի նամակ—ինչ որ ունէք չունէք ծախէք, ինչքան փող ունէք բերէք և եկէք այստեղ, ազգը ողջ կենայ, մենք այստեղ լաւ ենք, դուք էլ որ դաք՝ մի կերպով եօլա կերթանք. այստեղ ոչ քիւրդ կայ, ոչ էլ Համիդիէ. ընդհակառակն կան ճաշարաններ, բաժանում են ցորեն, ալիւր, տուն, տեղ են տալիս և ամենքը բարի են դէպի մեզ: Կաթողիկոսն էլ խնդրեց և էլ պասպօրտ չեն հարցնում մեզ, այնպէս որ եկէք եկէք, էլ մի մնաք այդ երկիր, կարող էք ծախէք հողն ու տաւարը, չէք կարող՝ տաւարը բերէք, հողը թողէք»:

(Նամակի այդ կտորը մենք թարգմանում ենք:) Դիտէք արդեօք աշնանից ի վեր՝ քանի տասնեակ նամակներ են գնացել այդպիսի նկարագրութիւններով՝ դէպի Ալաշկերտ, Մուշ, Խնուս և Կարին:

—Օրհնեալ լինեն, ազգը ողջ կենայ—ասում է ձեզ այստեղ եկած գաղթականը—ալ ուր երթանք ասանկ երկրէն:

—Բայց այս ամսի 15-ից ձեզ կը սկսեն զօռով ետ դարձնել, ասում էք իրանց, աւելի լաւ չէ՞, որ այժմեանից երթաք:

—Թա՜հ, հո՞րի երթանք, գոչում են նրանք,—կտուէք ալ չենք երթայ, ձեզի պէս աղաներ որ

---

Պատահում է և հակառակը։—Որ և է եկեղեցում ընտրութիւնը կատարվել է անկանոն կերպով, այսինքն իշխանութեան տուած կանոնները չեն պահպանվել, ոտի տակ են տրվել,—ներկայ չէ եղել ծխականների $^1/_5$ մասը, ներկայ եղողներից շատերն էլ անչափահաս են եղել, իսկական ծխականի փոխարէն ներկայացել է կեղծ, պատրաստած քուէարկող, և այլն և այլն։ Այդ անկանոնութեան, այդ զգալի զեղծումների դէմ ընտրողները բողոք են տալիս իշխանութեան, դանդատ են ներկայացնում։ բայց ելի միմեանց պատահած ժամանակ՝ միամտաբար միմեանց հարցնում են. „արդեօք մեր բողոքը կընդունվի՞, թէ անտես կառնվի ու անկանոն ընտրութիւնը կը հաստատվի“։

Եւ յաճախ այդ տեսակ անկանոն ընտրութիւնները, չը նայած որ բողոք կայ, հաստատվում են, ինչպէս և յաճախ կանոնաւոր ընտրութիւնը, չը նայած որ բողոքող էլ չը կայ, չէ հաստատվում։

Ինչ է դուրս գալիս այդ բոլորից.—դուրս է գալիս այն, որ իսկապէս ընտրութիւնը ամբողջութեան կամ մեծամասնութեան կամքի արտայայտութիւն չէ, ինչպէս ասացինք մեր յօդուածի սկզբում,—այլ շատ անգամ հաստատողի, կամ իշխանութեան կամքի արտայայտութիւն։ Իսկ իշխանութեան կամքը, ժողովրդական ընտրութեան գործում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ կամայականութիւն։

Իշխանութեան կամքը՝ օրէնքն է, եղած կանոնները։ Երբ ընտրող ժողովուրդը խախտում է այդ օրէնքը կամ կանոնը, կը նշանակի նա գործում է մի անկանոնութիւն, որի առաջն առնելը իշխանութեան իրաւունքը և պարտաւորութիւնն է։—Բայց երբ ինքը, իշխանութիւնն է շեղվում իր հրատարակած օրէնքներից կամ կանոններից, կը նշանակի նա ինքը խախտում է ժողովրդի իրաւունքները։

Դա անբնական, անհասկանալի, և նոյն իսկ ապօրինի է։ Եւ ցաւալին այն է, որ այդ անբնական և անարդար երևոյթը տարիների ընթացքում դարձել է սովորական, և նոյն իսկ օրէնք։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Ձեզ ենք դիմում Թիֆլիսի ընտրողներ։ Ի՞նչ արեցիք, ինչ սարսափելի յանցանք գործեցիք։

Սնացրիք մարդկանց, կտրեցիք հաղգային կապալառուների, և նրանց արբանեակների քունը, և այժմ հանգիստ նստած՝ նայում և ծիծաղում էք, թէ ինչ իրարանցում, ինչ յուսահատութիւն, ինչ փափաց է տիրում Հայաստանեայց եղուիտների բանակում։

Ի՞նչ էք ծիծաղում. հեշտ բան է։ Մարդիկ տասնեակ տարիներով տիրել են ազգային գործերին, տան-քսան տարուց ի վեր փափուկ նստել են Ներսիսեան դպրոցում, անպէտք, բայց հլու հնազանդ վարժապետներին տեղ են տուել, փառաբանութիւններ են ստացել.—իսկ այսօր դուք ձեր քուէներով նրանց ճանապարհ էք դնում, արտաքսում, վռնդում էք...

Եւ դեռ զարմանում էք, որ նրանք չեն ուզում բաժանվել Ներսիսեան դպրոցից, չեն ուզում դուրս գնալ այնտեղից, չեն ուզում նորերին տեղ տալ։

Դուրս գնալ Ներսիսեան դպրոցից.—դա մահ է նրանց համար։ Ահա թէ ինչու ամեն միջոց, ամեն ջանք գործ են դնում խառնել, տակն ու վրա անել ընտրութիւնները, բեկանել տալ եղածները և մի կերպ դուրս պրծնել...

Չէ՞ք հաւատում։ Տեսէք։ Վազվզում են, նամակներ են գրում, իրանց խայտառակ թերթերում աջ և ձախ հայհոյում են, եղած ընտրութիւնները չեն ճանաչում, մինչև իսկ ընտրութիւնների ցուցակը չեն տպագրում, և նախօրօք գուշակում են (կարծէք առաջնորդ լինեն) թէ որ եկեղեցում կը քանդվի, որ ընտրութիւնը կը բեկանվի։

Հետևանքը։ Հետևանքը կը տեսնենք։

—

Ի՞նչ էք ուզում դուք, խեղճ մարդիկ։ Միթէ ճշմարիտ երևակայում էք, որ ընտրութիւնները քանդել տալով, խառնաշփոթութիւններ անելով, կը մոռացնէք այն ապտակը, որ ստացաք. միթէ կարծում էք, ճշմարիտ, որ աշխարհը կոյր է, և չը տեսաւ կիրակի օրվայ ձեր յուսահատ անկումը։

Քանդել տուեցէք, նորերը նշանակեցէք. յետոյ։ Կարծում էք ժողովուրդը մի տերտէր, մի վարդապետ, մի հոգևորական է, որ վախեցնէք, խաբէք, կամ զանազան յիմար խոստումներով ճանապարհից հանէք։

Ի զուր է։ Ի զուր։

—

Հրեշտակապետաց եկեղեցու ընտրութիւնը քանդված է միայն երեկ, ամսիս 24-ին, իսկ խաւարամիտների օրդանները դեռ մի շաբաթ առաջ, երեքշաբթի օր, յայտարարեցին, որ Հրեշտակապետաց եկեղեցում նոր ընտրութիւն կը լինի։

Ինչ կը նշանակի այդ։

Պաշտօնապէս ոչինչ չէ յայտարարված, բայց քաղաքի մէջ արդէն ամենքը խօսում են, թէ չորս-հինգ եկեղեցում պէտք է ընտրութիւնը քանդվի, նոր ընտրութիւն նշանակվի։

Ո՞վ է այդ քանդողը։ Ինչպէս մենք գիտենք, դեռ որոշում չէ կայացրած։ Բայց եթէ որոշում չէ կայացրած, այդ ովքեր են, որ որոշումներ են կայացնում, լուրեր տարածում, նոյն իսկ տպագրում, և հրահանգներ տալիս։

Գիտէք արդեօք այդ բոլորը։ Եթէ չը գիտէք—ահա ձեզ ճշմարտութիւնը։

—

Ս. Նշանում ընտրութիւն պէտք է լինի կիրակի օրը. այդ հասկանալի է. Էջմիածնեցոց եկեղեցում ևս նոյն օրը։ Այդ էլ հասկանալի է։ Բայց ինչ մեղաւոր է Հրեշտակապետաց եկեղեցին, որ ընտրութիւնը բեկանվում է։

Ինչ մեղաւոր է ժողովուրդը, որ դիցուք Մաղնում չեն ընտրվել ազգային կապալառուները.—միթէ այդ իրաւունք է տալիս ընտրութիւնը քանդել, դժգոհութիւնների առիթներ տալ։

—

Բաւական է վերջապէս։ Բաւական են այդքան խաղերը, աչքակապութիւնները, անսանձ ինտրիգաները։

Ով պէտք է, վերջապէս, այդ մարդկանց ամօթ քարոզի, ինքնասիրութեան դաս տայ։ Ժողովուրդը չէ ուզում, չէ ցանկանում այդ մարդկանց.—թող հեռանան ուրեմն։

Ինչու պղտորում են մտքերը. ինչու գրգռում են ժողովրդին։

Հերիք է. վերջապէս ամաչեցէք։

*

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՕԼԵՐԱՑԻ ԵՒ ԺԱՆՏԱԽՏԻ ՄԱՍԻՆ

—

Սամուշինում, Բուկովինայում, յունիսի 5-ից մինչև 10-ը խօլերայից հիւանդացան 2, մեռաւ 1 հոգի։

Խօլերային հիւանդութիւնները Ֆինիստէր դէպարտամենտում, Ֆրանսիայում, վերջացան մայիսի 25-ից։

Գալիցիայում, յունիսի 5-ից մինչև 11-ը խօլերայով հիւանդացան՝ Բօրշչով աւանում 8, մեռան 7 հոգի։ Գուսիատինում հիւանդացաւ 1 մեռաւ, 1 հոգի։

Իսկէլինում, ասիական Թիւրքիայում, մայիսի 31-ից մինչև յունիսի 5-ը խօլերայով հիւանդացան 14, մեռան 4 հոգի։ Սամսօնում, նոյն ժամանակամիջոցում հիւանդացան 8, մեռան 4. Եօզղատում մայիսի 31-ից մինչև յունիսի 3-ը հիւանդացան 134, մեռան 34. Կիր-Շէխիում, նոյն ժամանակամիջոցում, հիւանդացան 33, մեռան 24 հոգի։ Ավանօսում (Անգօրայի վիլայէտ) մայիսի 23-ից մինչև յունիսի 3-ը հիւանդացան 26, մեռան 17 հոգի։

Հօնգ-Կօնգում և Կանտօնում, ժանտախտ տարածվելու պատճառով, մեծ-բրիտանական կոլօնիաների մինիստրութիւնը հաղորդում է ձեռք առած հետևեալ միջոցների մասին։ Սինգապուրում ինն օրեայ կարանտին է հաստատված Հօնգ-Կօնգից եկող նաւերի համար, և մտադրութիւն կայ արգելել չինացի բանւորներ բերելը։ Յէյլօն կղզու վրա նաւահանգստային բժիշկներին պատուիրված է ուշադրութեամբ քննել այն բոլոր նաւերը, որոնք գալիս են Հօնգ-Կօնգից։ Ժանտախտ յայտնվելու դէպքում նաւը անյապաղ ենթարկվում է խիստ կարանտինի։

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Նորերս արգելվեցաւ նոյնպէս և «Բիւրակ» շաբաթաթերթը, Քըրիատոսի մասին գրված պարբերութեան համար, որը մեկնած են իբր թէ ակնարկութիւն սուլթանի անձի դէմ»։

—

«Մշակի» կէս տարվայ բաժանորդագրութիւնը բացված է։ Յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը «Մշակի» բաժանորդագինն է 6 բուբլի։ Խնդրում ենք այն բաժանորդներից, որոնց վրա ապառիկ կայ, շտապեն ուղարկել մեզ ապառիկները։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Լուսաւորիչ և Զրկինեանց եկեղեցիների ծխականները բողոք են ներկայացրել թեմական առաջնորդին՝ յունիսի 19-ին այդ եկեղեցիներում կատարված ընտրութեան դէմ։ Լուսաւորիչ եկեղեցու բողոքի մէջ, ինչպէս մեզ հաղորդում են, ցոյց է տրված, որ 1) շատ ծխականներ միայն նախորդ օրն են ծուխ գրվել. 2) դրանց մեծ մասը անչափահասներ են. 3) իսկական ծխականների տեղ եկել ընտրութեանը մասնակցել են ուրիշ անձինք, կեղծ կերպով։ Այդ բոլորը ապացուցված է փաստերով։ Ինչ կարծիք, որ այդ բոլոր փաստերը ի նկատի ունենալով, թեմական առաջնորդը, օրէնքներ գործողներ։ Գուցէ առարկվի, թէ դրանցից մի քանիսներին չէ տրվելու ճաշ. բայց փաստը միշտ փաստ է մնում, որ այդ ընտանիքները ներկայացել են որպէս օգտվել կամեցողներ. ուրիշ բան է, որ մերժվել են մի քանիսները։

Ներկայացողների միջից 70 ընտանիք ունեն աշխատելու ընդունակ անձեր. դրանց շարքում կան 39 ընտանիք, որոնք ունեն նոյն իսկ 2—3 աշխատաւոր անձեր տան մէջ։

Վերոյիշեալ թուերը ցոյց են տալիս, որ ճաշարանը իր բացվելու օրից մինչև այժմ եռապատկել ու քառապատկել է ու դեռ ևս աւելացնում է օրից օր մուրացկանների թիւը, առիթ է տալիս գաղթականներին թողնել գիւղերում իրանց գտած գործերը և ետ դառնալու պատրաստութիւնը և գալ, լցվել քաղաք՝ ճաշարանից ուտելու և ձրի ցրված ալիւրով նոյն իսկ առնաւոր անելու։

Ոչ ոք, ի հարկէ, դէմ չէ բարեգործութեան, բայց ոչ ոք էլ չէ կարող ուրանալ, որ այս կերպ գործ դրված բարութիւնը գոնէ սրանից յետոյ աւելի վնաս կը տայ, քան թէ օգուտ։

Մենք ոչինչ չենք ուզում աւելացնել վերոյիշեալ պերճախօս փաստերի վրա։

Բայց որ իսկապէս գաղթականութիւնը աճում է և ունի իր արմատական այնպիսի պատճառները, որոնց վրա արժէ ուշադրութիւն դարձնել և որոնց զօրեղացնելու համար չը պէտք է ծառայի բարեգործութեան այս կամ այն ձևը,—ահա թէ ինչ էր մեր ասելիքը այս անգամ։

Իսկ գաղթականութեան պատճառների մի առ մի, մանրամասն ուսումնասիրութիւնը թողնում ենք յետագայ մի շարք նամակներին։

Կարս. Ապրօ

---

Պատահում է և հակառակը։—Որ և է եկեղեցում ընտրութիւնը կատարվել է անկանոն կերպով, այսինքն իշխանութեան տուած կանոնները չեն պահպանվել, ոտի տակ են տրվել,—ներկայ չէ եղել ծխականների $^1/_5$ մասը, ներկայ եղողներից շատերն էլ անչափահաս են եղել, իսկական ծխականի փոխարէն ներկայացել է կեղծ, պատրաստած քուէարկող, և այլն և այլն։ Այդ անկանոնութեան, այդ զգալի զեղծումների դէմ ընտրողները բողոք են տալիս իշխանութեան, դանդատ են ներկայացնում։ բայց ելի միմեանց պատահած ժամանակ՝ միամտաբար միմեանց հարցնում են. „արդեօք մեր բողոքը կընդունվի՞, թէ անտես կառնվի ու անկանոն ընտրութիւնը կը հաստատվի“։

Եւ յաճախ այդ տեսակ անկանոն ընտրութիւնները, չը նայած որ բողոք կայ, հաստատվում են, ինչպէս և յաճախ կանոնաւոր ընտրութիւնը, չը նայած որ բողոքող էլ չը կայ, չէ հաստատվում։

Ինչ է դուրս գալիս այդ բոլորից.—դուրս է գալիս այն, որ իսկապէս ընտրութիւնը ամբողջութեան կամ մեծամասնութեան կամքի արտայայտութիւն չէ, ինչպէս ասացինք մեր յօդուածի սկզբում,—այլ շատ անգամ հաստատողի, կամ իշխանութեան կամքի արտայայտութիւն։ Իսկ իշխանութեան կամքը, ժողովրդական ընտրութեան գործում, ոչ այլ ինչ է, եթէ ոչ կամայականութիւն։

Իշխանութեան կամքը՝ օրէնքն է, եղած կանոնները։ Երբ ընտրող ժողովուրդը խախտում է այդ օրէնքը կամ կանոնը, կը նշանակի նա գործում է մի անկանոնութիւն, որի առաջն առնելը իշխանութեան իրաւունքը և պարտաւորութիւնն է։—Բայց երբ ինքը, իշխանութիւնն է շեղվում իր հրատարակած օրէնքներից կամ կանոններից, կը նշանակի նա ինքը խախտում է ժողովրդի իրաւունքները։

Դա անբնական, անհասկանալի, և նոյն իսկ ապօրինի է։ Եւ ցաւալին այն է, որ այդ անբնական և անարդար երևոյթը տարիների ընթացքում դարձել է սովորական, և նոյն իսկ օրէնք։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Ձեզ ենք դիմում Թիֆլիսի ընտրողներ։ Ի՞նչ արեցիք, ինչ սարսափելի յանցանք գործեցիք։

Սնացրիք մարդկանց, կտրեցիք հաղգային կապալառուների, և նրանց արբանեակների քունը, և այժմ հանգիստ նստած՝ նայում և ծիծաղում էք, թէ ինչ իրարանցում, ինչ յուսահատութիւն, ինչ փափաց է տիրում Հայաստանեայց եղուիտների բանակում։

Ի՞նչ էք ծիծաղում. հեշտ բան է։ Մարդիկ տասնեակ տարիներով տիրել են ազգային գործերին, տան-քսան տարուց ի վեր փափուկ նստել են Ներսիսեան դպրոցում, անպէտք, բայց հլու հնազանդ վարժապետներին տեղ են տուել, փառաբանութիւններ են ստացել.—իսկ այսօր դուք ձեր քուէներով նրանց ճանապարհ էք դնում, արտաքսում, վռնդում էք...

Եւ դեռ զարմանում էք, որ նրանք չեն ուզում բաժանվել Ներսիսեան դպրոցից, չեն ուզում դուրս գնալ այնտեղից, չեն ուզում նորերին տեղ տալ։

Դուրս գնալ Ներսիսեան դպրոցից.—դա մահ է նրանց համար։ Ահա թէ ինչու ամեն միջոց, ամեն ջանք գործ են դնում խառնել, տակն ու վրա անել ընտրութիւնները, բեկանել տալ եղածները և մի կերպ դուրս պրծնել...

Չէ՞ք հաւատում։ Տեսէք։ Վազվզում են, նամակներ են գրում, իրանց խայտառակ թերթերում աջ և ձախ հայհոյում են, եղած ընտրութիւնները չեն ճանաչում, մինչև իսկ ընտրութիւնների ցուցակը չեն տպագրում, և նախօրօք գուշակում են (կարծէք առաջնորդ լինեն) թէ որ եկեղեցում կը քանդվի, որ ընտրութիւնը կը բեկանվի։

Հետևանքը։ Հետևանքը կը տեսնենք։

—

Ի՞նչ էք ուզում դուք, խեղճ մարդիկ։ Միթէ ճշմարիտ երևակայում էք, որ ընտրութիւնները քանդել տալով, խառնաշփոթութիւններ անելով, կը մոռացնէք այն ապտակը, որ ստացաք. միթէ կարծում էք, ճշմարիտ, որ աշխարհը կոյր է, և չը տեսաւ կիրակի օրվայ ձեր յուսահատ անկումը։

Քանդել տուեցէք, նորերը նշանակեցէք. յետոյ։ Կարծում էք ժողովուրդը մի տերտէր, մի վարդապետ, մի հոգևորական է, որ վախեցնէք, խաբէք, կամ զանազան յիմար խոստումներով ճանապարհից հանէք։

Ի զուր է։ Ի զուր։

—

Հրեշտակապետաց եկեղեցու ընտրութիւնը քանդված է միայն երեկ, ամսիս 24-ին, իսկ խաւարամիտների օրդանները դեռ մի շաբաթ առաջ, երեքշաբթի օր, յայտարարեցին, որ Հրեշտակապետաց եկեղեցում նոր ընտրութիւն կը լինի։

Ինչ կը նշանակի այդ։

Պաշտօնապէս ոչինչ չէ յայտարարված, բայց քաղաքի մէջ արդէն ամենքը խօսում են, թէ չորս-հինգ եկեղեցում պէտք է ընտրութիւնը քանդվի, նոր ընտրութիւն նշանակվի։

Ո՞վ է այդ քանդողը։ Ինչպէս մենք գիտենք, դեռ որոշում չէ կայացրած։ Բայց եթէ որոշում չէ կայացրած, այդ ովքեր են, որ որոշումներ են կայացնում, լուրեր տարածում, նոյն իսկ տպագրում, և հրահանգներ տալիս։

Գիտէք արդեօք այդ բոլորը։ Եթէ չը գիտէք—ահա ձեզ ճշմարտութիւնը։

—

Ս. Նշանում ընտրութիւն պէտք է լինի կիրակի օրը. այդ հասկանալի է. Էջմիածնեցոց եկեղեցում ևս նոյն օրը։ Այդ էլ հասկանալի է։ Բայց ինչ մեղաւոր է Հրեշտակապետաց եկեղեցին, որ ընտրութիւնը բեկանվում է։

Ինչ մեղաւոր է ժողովուրդը, որ դիցուք Մաղնում չեն ընտրվել ազգային կապալառուները.—միթէ այդ իրաւունք է տալիս ընտրութիւնը քանդել, դժգոհութիւնների առիթներ տալ։

—

Բաւական է վերջապէս։ Բաւական են այդքան խաղերը, աչքակապութիւնները, անսանձ ինտրիգաները։

Ով պէտք է, վերջապէս, այդ մարդկանց ամօթ քարոզի, ինքնասիրութեան դաս տայ։ Ժողովուրդը չէ ուզում, չէ ցանկանում այդ մարդկանց.—թող հեռանան ուրեմն։

Ինչու պղտորում են մտքերը. ինչու գրգռում են ժողովրդին։

Հերիք է. վերջապէս ամաչեցէք։

*

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՕԼԵՐԱՑԻ ԵՒ ԺԱՆՏԱԽՏԻ ՄԱՍԻՆ

—

Սամուշինում, Բուկովինայում, յունիսի 5-ից մինչև 10-ը խօլերայից հիւանդացան 2, մեռաւ 1 հոգի։

Խօլերային հիւանդութիւնները Ֆինիստէր դէպարտամենտում, Ֆրանսիայում, վերջացան մայիսի 25-ից։

Գալիցիայում, յունիսի 5-ից մինչև 11-ը խօլերայով հիւանդացան՝ Բօրշչով աւանում 8, մեռան 7 հոգի։ Գուսիատինում հիւանդացաւ 1 մեռաւ, 1 հոգի։

Իսկէլինում, ասիական Թիւրքիայում, մայիսի 31-ից մինչև յունիսի 5-ը խօլերայով հիւանդացան 14, մեռան 4 հոգի։ Սամսօնում, նոյն ժամանակամիջոցում հիւանդացան 8, մեռան 4. Եօզղատում մայիսի 31-ից մինչև յունիսի 3-ը հիւանդացան 134, մեռան 34. Կիր-Շէխիում, նոյն ժամանակամիջոցում, հիւանդացան 33, մեռան 24 հոգի։ Ավանօսում (Անգօրայի վիլայէտ) մայիսի 23-ից մինչև յունիսի 3-ը հիւանդացան 26, մեռան 17 հոգի։

Հօնգ-Կօնգում և Կանտօնում, ժանտախտ տարածվելու պատճառով, մեծ-բրիտանական կոլօնիաների մինիստրութիւնը հաղորդում է ձեռք առած հետևեալ միջոցների մասին։ Սինգապուրում ինն օրեայ կարանտին է հաստատված Հօնգ-Կօնգից եկող նաւերի համար, և մտադրութիւն կայ արգելել չինացի բանւորներ բերելը։ Յէյլօն կղզու վրա նաւահանգստային բժիշկներին պատուիրված է ուշադրութեամբ քննել այն բոլոր նաւերը, որոնք գալիս են Հօնգ-Կօնգից։ Ժանտախտ յայտնվելու դէպքում նաւը անյապաղ ենթարկվում է խիստ կարանտինի։

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Նորերս արգելվեցաւ նոյնպէս և «Բիւրակ» շաբաթաթերթը, Քըրիատոսի մասին գրված պարբերութեան համար, որը մեկնած են իբր թէ ակնարկութիւն սուլթանի անձի դէմ»։

—

«Մշակի» կէս տարվայ բաժանորդագրութիւնը բացված է։ Յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը «Մշակի» բաժանորդագինն է 6 բուբլի։ Խնդրում ենք այն բաժանորդներից, որոնց վրա ապառիկ կայ, շտապեն ուղարկել մեզ ապառիկները։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Լուսաւորիչ և Զրկինեանց եկեղեցիների ծխականները բողոք են ներկայացրել թեմական առաջնորդին՝ յունիսի 19-ին այդ եկեղեցիներում կատարված ընտրութեան դէմ։ Լուսաւորիչ եկեղեցու բողոքի մէջ, ինչպէս մեզ հաղորդում են, ցոյց է տրված, որ 1) շատ ծխականներ միայն նախորդ օրն են ծուխ գրվել. 2) դրանց մեծ մասը անչափահասներ են. 3) իսկական ծխականների տեղ եկել ընտրութեանը մասնակցել են ուրիշ անձինք, կեղծ կերպով։ Այդ բոլորը ապացուցված է փաստերով։ Ինչ կարծիք, որ այդ բոլոր փաստերը ի նկատի ունենալով, թեմական առաջնորդը, օրէնքներ գործողներ։ Գուցէ առարկվի, թէ դրանցից մի քանիսներին չէ տրվելու ճաշ. բայց փաստը միշտ փաստ է մնում, որ այդ ընտանիքները ներկայացել են որպէս օգտվել կամեցողներ. ուրիշ բան է, որ մերժվել են մի քանիսները։

Ներկայացողների միջից 70 ընտանիք ունեն աշխատելու ընդունակ անձեր. դրանց շարքում կան 39 ընտանիք, որոնք ունեն նոյն իսկ 2—3 աշխատաւոր անձեր տան մէջ։

Վերոյիշեալ թուերը ցոյց են տալիս, որ ճաշարանը իր բացվելու օրից մինչև այժմ եռապատկել ու քառապատկել է ու դեռ ևս աւելացնում է օրից օր մուրացկանների թիւը, առիթ է տալիս գաղթականներին թողնել գիւղերում իրանց գտած գործերը և ետ դառնալու պատրաստութիւնը և գալ, լցվել քաղաք՝ ճաշարանից ուտելու և ձրի ցրված ալիւրով նոյն իսկ առնաւոր անելու։

Ոչ ոք, ի հարկէ, դէմ չէ բարեգործութեան, բայց ոչ ոք էլ չէ կարող ուրանալ, որ այս կերպ գործ դրված բարութիւնը գոնէ սրանից յետոյ աւելի վնաս կը տայ, քան թէ օգուտ։

Մենք ոչինչ չենք ուզում աւելացնել վերոյիշեալ պերճախօս փաստերի վրա։

Բայց որ իսկապէս գաղթականութիւնը աճում է և ունի իր արմատական այնպիսի պատճառները, որոնց վրա արժէ ուշադրութիւն դարձնել և որոնց զօրեղացնելու համար չը պէտք է ծառայի բարեգործութեան այս կամ այն ձևը,—ահա թէ ինչ էր մեր ասելիքը այս անգամ։

Իսկ գաղթականութեան պատճառների մի առ մի, մանրամասն ուսումնասիրութիւնը թողնում ենք յետագայ մի շարք նամակներին։

Կարս. Ապրօ

քի հիման վրա, կը քանդի եղած անկանոն ընտրութիւնը և կը նշանակի նոր ընտրութիւն։ Զենք կարող չը յայտնել մեր զարմանքը, որ ընտրութեան ժամանակ նախագահը թոյլ է տուել այդպիսի ապօրինի զեղծումներ։ Մենք շատ ուրախ կը լինէինք, եթէ այդ բոլորը սխալ լինէր։ Տարաբաղդաբար, զուտ ճշմարտութիւն է։

—

Կ. Պոլսից «Բէյտէրի գործակալութեանը» հեռագրում են, որ սուլթանը վճռեց ընդունել հայոց պատրիարք Աշըգեանի հրաժարականը։

—

Մեզ հաղորդում են մի անհաւատալի լուր.— Ներսիսեան դպրոցի այժմեան հոգաբարձութիւնը մտադիր է այս օրերս նիստ գումարել, եկող ուսումնական տարվայ համար ուսուցչական խումբ կազմելու։ Ահա թէ ո՞րտեղ է հասնում այդ մարդկանց յանդգնութիւնը.—Նոր հոգաբարձական ընտրութիւն պէտք է լինի այս օրերս, իսկ հին հոգաբարձները ուզում են նոր հոգաբարձութեան վզին փաթաթել ուսուցչական մի ամբողջ խումբ...

—

Ցոգուտ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան ստացանք. 1) Բագուից, Եփրեմ Ստեփանեանի միջոցով, 22 ռուբլի, հանգանակած հետեւեալ անձինքներից. Տ. Տ. Սաղիեանցներ 5 ր.. Ե. Ստեփանեանց 3 ր., Մ. Վարդապետեանց 2 ր., Գ. Սաղիեանց, Մ. Ահարոնեանց, Զ. Տէր-Պետրոսեանց, Մ. Տէր-Ստեփանեանց, Հ. Մելքումեանց, Ա. Բաբայեանց, Անյայտ ումն, Ն. Մախմուրեանց, Ա. Տէր-Մինասեանց, Ումն Ա., Գ. Սափարեանց, մի մի ռուբլի, Անյայտ ումն և Դ. Դանիէլեանց 50-ական կօպէկ։ 2) Մոսկվայից, Բարսեղ Աւետիսեանից 5 ռուբլի։ Ուրեմն նախկին 3350 ռուբլի 28 կ. հետ այժմ ունենք 3377 ռուբլի 75 կ.։

—

Մեզ հաղորդում են, որ կիրակի օր, առաւօտեան ժամը 12-ին, ս. Նշան, Էջմիածնեցոց և Հրեշտակապետաց եկեղեցիներում պէտք է ընտրութիւն լինի։ Հրաւիրագրերը արդէն քահանաները տարածում են։ Զարմանում ենք, թէ ինչու այդ մասին Թիֆլիսի կոնսիստորիան լրագիրներում չէ յայտարարում։ Հարկաւոր ենք համարում թեմական առաջնորդի ուշադրութիւնը հրաւիրել այն բանի վրա, որ պէտք է կարգադրել բոլոր ծխականներին ժողովի հրաւիրելու մասին, որպէս զի դժգոհութիւնների առիթ չը լինի։

—

Մեզ հաղորդում են, որ Վանում տեղի են ունեցել նոր խուզարկութիւններ և ձերբակալութիւններ։

—

Տեղական «Новое Обозрѣніе» լրագիրը իր յունիսի 23-ի համարում մի դեղեցիկ յօդուած է նուիրել պատգամաւորական ընտրութիւններին։ Լրագիրը չնորհաւորում է այն անկասկածելի յաղթութիւնը, որ տարաւ երիտասարդ, առաջադիմական կուսակցութիւնը՝ ընտրութիւնների ժամանակ։ «Тифлисскіи Листокъ» լրագիրը ևս իր երէկվայ համարում նուիրել է այդ հարցին մի առաջնորդող յօդուած, որի մէջ այն ճշմարիտ միտքն է յայտնում, թէ ընտրութիւնները կանոնաւորելու համար՝ նախ և առաջ պէտք է պատրաստել ընտրողների ցուցակը։ «Արձագանքը» իր վերջին համարը լցրել է դատարկ հայհոյանքներով «Новое Обозрѣніе» լրագրի դէմ—հայհոյանքներ, որոնք արտայայտում են միայն անսահման յուսահատութիւն և ուրիշ ոչինչ։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ դրավաճառների և հրատարակիչների ընկերութեան վերջին նիստերից մէկում, դաւառներից եկած բազմաթիւ անդամների մասնակցութեամբ, վճռվեց՝ հրաւիրել ռուս հրատարակիչների և դրավաճառների առաջին համագումար ժողովը։ Ժողովում համաձայնութիւն չը կարողացան կայացնել համագումար ժողովի տեղի մասին. Պետերբուրգի անդամները առաջարկում էին Պետերբուրգում գումարել ժողովը, իսկ դաւառական անդամները—Մոսկվայում։

—

Կովկասեան «Сельское Хозяйство» լրագիրը հաղորդում է, որ Գորու նահանգի շատ այգիներում երևացել է խնձորի ցեց անուանված խիստ վնասակար միջատը։ Մի քանի գիւղերում, ինչպէս օրինակ Զերթի գիւղում, խնձորի ծառերը բոլորովին զրկվել են տերևներից։

—

Ինչպէս յայտնի է, Թէհրանում, Պոլեակովի նախաձեռնութեամբ, հիմնվել է մի բանկ, որ կատարում է ֆինանսական մեծ գործողութիւններ։ Այդ բանկի դիրեկտոր նշանակված է այժմ պետական բանկի Աստրախանի բաժնի կառավարիչ Տիտարիւմով։

—

Լօնդօնից մեզ գրում են. «Անտարակոյս ուրախութիւն պէտք է պատճառէ ձեզ, երբ այս երկտողից իմանաք, որ Լօնդօնի հայերը յունիսի 1-ին հիմնեցին մի ընթերցարան։ Ընթերցարանի վարչութիւնը կը խնդրէ, որ դուք նուիրէք «Մշակ» լրագրի մի օրինակ, որով օգնած պիտի ըլլաք այս օգտակար ձեռնարկութեան»։

—

Թիֆլիսի հայոց կոնսիստորիան սկսել է ընտրութիւններ նշանակել եկեղեցիներում, առանց այդ մասին յայտարարելու լրագիրներում։ Զենք հասկանում, թէ այդ ո՞ր օրէնքով և ո՞ր կանոնով է։ Քահանաները շատ ծխականների հրաւէրներ չեն ուղարկում. եթէ լրագիրներումն էլ յայտարարութիւններ չեն լինի, էլ ո՞րտեղից պէտք է իմանան ծխականները ընտրութեան մասին։

—

ՂԱՄԱՐԼՈՒ գիւղից մեզ գրում են. «Այստեղ հունձը սկսվեց։ Բերքը այս կողմերում այն աստիճան առատ է, որ հէնց այժմեանից գնների վրա ազդել է։ Որ կողմը նայում էք՝ ձեր առաջ բացվում են ցորենի արտեր մարդաբոյ բարձրութեամբ, և լիք լիք հասկերը մեղմ զեփիւռից օրօրվելով՝ նոր բաղդ են աւետում երկրագործ մշակին»։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԿԱՐՆՕԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Կարնօի սպանութեան հանգամանքները շատ մանրամասն կերպով հաղորդեցին հեռագիրները։ Այնու ամենայնիւ, հետաքրքիր են ականատեսների պատմածները, որ մենք քաղում ենք մայրաքաղաքի լրագիրներից։

«Ես վկայ էի յանցանքին,—պատմում է մի ականատես,—օգնում էի տեղափոխել վիրաւորվածին, տեսայ, աւաղ, բժիշկների ապարդիւն ջանքերը, կարդում էի նրանց աչքերում յուսահատութիւն, և իմ սիրտը այնպէս ցնցված է այդ դէպքի տպաւորութիւններով, որ, խոստովանում եմ, չեմ կարող յաջորդաբար պատմել այն ցնցող տեսարանները, որ տեղի ունեցան աչքիս առջև։

Երբ բանկէտը վերջացաւ «կեցցէ Կարնօ» աղաղակներով, պատգամաւորները և քաղաքագլուխները խմբվեցին հանրապետութեան նախագահի՝ չնորհաւորելով նրան, սեղմելով նրա ձեռքերը և յայտնելով նրան իրանց վստահութիւնը, հաւատարմութիւնը և յարգանքը։ Թատրոն գնալու ժամանակ ամբոխը ոգևորված ողջունում էր Կարնօին, որը սիրալիր կերպով, ձեռքի նշանով և գլխարկը հանելով՝ չնորհակալութիւն էր յայտնում։ Զգացված լինելով այդ ցոյցերից, նախագահը երկու ձիաւոր օֆիցէրներին, որոնք գնում էին կառքի երկու կողմը, հրամայեց յետ մնալ։ «Թողէք մօտ գալ այդ բարի մարդկանց, որոնք ցանկանում են սեղմել ձեռքս», ասեց Կարնօ։ Հազիւ օֆիցէրները յետ էին կանգնել, այն վայրկեանին, երբ կառքը ծռվում էր des Cordeliers հրապարակի անկիւնից և մտնում էր Հանրապետութեան փողոցը, մի ինչ որ երիտասարդ, թուղթը ձեռքին, վազեց դէպի կառքը... «Կրկին խնդիրք», մտածեցի ես։ Նախագահի Լիօնում եղած ժամանակ նրան տուել էին 5 թէ 6 խնդիրք։ Բայց յանկարծ ես տեսայ, որ գեներալ Բօրիուս և Լիօն քաղաքի մէրը կանգնած են նախագահի կառքում։ Մէրը աղաղակում էր. «ընունեցէք նրան»։ Գեներալ Բօրիուս կառապանին հրամայեց յետ գնալ պրէֆէկտուրա։ Ես առաջ վազեցի, Կարնօ յետ ընկաւ կառքի մէջքի վրա. «Ես վիրաւորված եմ,—չչնջաց նա թուլացած ձայնով, ձեռքը սեղմելով վէրքի վրա, և ապա ուշաթափ եղաւ։ Նրա աչքերը փակված էին, և դէմքի գծերը փոխված։ Մենք կարծում էինք, որ նախագահը տեղն ու տեղը սպանված է։»

Մի ուրիշ ականատես հետեւեալ մանրամասնութիւններն է հաղորդում, որ լրացնում են այդ պատմութիւնը։ «Երբ մարդասպանը թռաւ կառքի մէջ, Կարնօն կարծելով, թէ երիտասարդ մարդը ողջունում է իրան, մեկնեց նրան իր աջ ձեռքը. անծանօթը բռնելով նախագահի ձեռքը և բարձրացնելով՝ խրեց դաշոյնը կրծքի մէջ։»

Այն ինչ կառքը ընթանում էր դէպի պրէֆէկտուրա։ Բժիշկ Պօնսէ վախենում էր ժամանակը կորցնել, որովհետև արիւնը հոսում էր անդադար։ Կիրասիրների գունդը չրջապատած էր կառքը, և ամբոխը, տեղեկութիւն չունենալով պատահածի մասին, աղաղակում էր՝ «Կեցցէ Կարնօ»։

«Մենք վազում էինք կառքի ետևից,—պատմում է ականատեսը,—և համարեա նրա հետ միաժամանակ հասանք պրէֆէկտուրա։ Բժիշկ Պօնսէ ուսերից բռնեց նախագահին, մէկ ուրիշը բռնած ունէր բռնը, գեներալ Բօրիուսը—գլուխը, իսկ ես բռնած ունէի ոտները։

«Մեր բոլորի աչքերում արտասուքներ կային։ Կարնօ դեռ էլի ուշաթափ էր։ Հնարաւոր զգուշութեամբ մենք սանդուղքի աստիճաններով բարձրանալով, ներս տարանք վիրաւորվածին ննջարանը։ Նա դեռ ևս ուշքի չէր գալիս, և մենք դրեցինք նրան անկողնակալի վրա։ Բժիշկն բաց արեց շապիկը, հանեց Պատուաւոր Լէգիօնի ժապաւէնը և մերկացրեց վէրքը, որի շուրջը ցամաքած արիւն կար։ Պուլսը հազիւ էր լսվում։ Վէրքը հետազօտեցին միայն քառորդ ժամից յետոյ, այդ գործողութեան ժամանակ մեծ քանակութեամբ սև արիւն գնաց։ Պէտք էր կանգնեցնել ներքին արիւնհոսութիւնը։ Բժիշկ Պօնսէ դանակով և մկրատով կտրեց վէրքը։ Ցաւը մոռացութիւնից հանեց վիրաւորվածին. նա կիսով չափ բացեց աչքերը և հառաչում էր թոյլ ձայնով. «Դուք ինձ ցաւ էք պատճառում։ Ես տանջվում եմ։ Աւելի լաւ է թողէք ինձ։» Բժիշկները աշխատում էին հանգստացնել նրան։ Վերջապէս արիւնհոսութիւնը դադարեցրին։ Վէրքը լուացին, նրա մէջ բամբակ դրին։ Բժիշկները բոլոր յոյսերը կորցրին. այնուամենայնիւ, նրանք շարունակում էին կռուել մօտեցող մահվան հետ։ Թուլութիւնը մեծացաւ. բերել տուին գրգռող միջոցներ։ Բայց, աւաղ, արիւնի անգին կորուստը անուղղելի էր. փոքձեցին թթուածին, բայց ոչինչ չօգնեց և ոյժերը գնալով թուլանում էին։ 11 ժամին 30 րոպէին եկաւ նախագահի հօրեղբօր որդին, Սիմոն Կարնօ։ 11 ժամ 20 րոպէին բժիշկները յայտնեցին, որ վախճանը մօտենում է։ Սենեակը մտան Լիօնի արքեպիսկոպոսը և նրա փոխանորդը, որոնք մեռնողին օծեցին։ Նա ուշքի եկաւ, և հասկանալով իր անյուսալի դրութիւնը, չչնջաց. «Ցեսնում եմ, որ ես կորած եմ։»—«Պ. նախագահ, ձեր բարեկամներն են շրջապատում ձեզ», ասաց բժիշկ Պօնսէ։

«Ես շատ երջանիկ եմ, որ նրանք ներկայ են»,—պատասխանեց Կարնօ։ Այդ էին նրա վերջին խօսքերը։ 12 ժամ 37 րոպէին Կարնօ վախճանվեց։»

## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ՊԷՐԻԷ

—

Ֆրանսիական հանրապետութեան նորընտիր նախագահ Պէրիէ մասին մամուլի մէջ տարբեր կարծիքներ են յայտնվում։ Զափաւոր օրգանները ուրախ են, միապետականները շատ դոհ են, արմատական լրագիրները, ընդհակառակն, խիստ կերպով յարձակվում են նոր նախագահի վրա։

«Petit Journal» լրագիրը Պէրիէի ընտրութիւնը համարում է պատասխան այն կռուին, որ յայտնել են անարխիստները։ «Siecle» լրագիրը նոր նախագահի ընտրութիւնը համարում է կարգի և խաղաղութեան քաղաքականութեան յաղթութիւն։ Կասանիակ ասում է, որ դա պատասխան է սոցիալական ձգտումներին։ «Figaro» լրագրի աչքում Պէրիէ ընտրութիւնը նշանակում է՝ հեղինակութիւն ներսում և մեծ համարմունք՝ դրսում։ «Gaulois» լրագիրը համոզում է Պէրիէին պատերազմող նախագահ դառնալ՝ պաշտպանելու հասարակութիւնը իր թշնամիներից։ Լրագիրը նախատեսնում է անխնայ կռիւ հնարաւորութիւն և խորհուրդ է տալիս քաղաքական ներումն չնորհել և աքսորին վերաբերեալ օրէնքները վերացնել։

Կլէմանսօ, յարձակվելով Պէրիէի վրա, նրա ընտրութիւնը համարում է յետադիմութեան և պլուտօկրատիայի յաղթանակ և ընտրութեան հետևանքները բացատրում է բացառապէս նոր նախագահի հարստութեամբ։ «Justice» լրագրի խմբագիրը խորհուրդ է տալիս Պէրիէին ներումն չընորհել և դրանով վերացնել այն երկիւղները, որ պատճառել է նրա ընտրութիւնը։ «XIX Siecle» լրագիրը կառավարութեան դրութիւնը շատ ծանր և մինչև անգամ վտանգաւոր է համարում, որովհետև հնարաւոր է համարում, որ սիստեմատիական դիմադրութեան կը հանդիպի բոլոր առաջադէմների կողմից։ «Lanterne լրագիրն ասում է, որ Պէրիէի ընտրութիւնը մի պատերազմ է, որ յայտնվում է դէմոկրատիային։ «Petite Republique» լրագիրը Պէրէին անուանում է արիստոկրատիայի, կղերականների և պլուտօկրատիայի ներկայացուցիչ։

## ՆԱՄԱԿ ԹԻԹԻՐԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, յունիսի 18

Վերջին նամակի մէջ գրած էինք, որ սուլթանը չէր ընդունած Աշըգեանի հրաժարականը, այլ թէզքէրէով մը հրամայած էր, որ անմիջապէս գործերու գլուխ անցնի և վարէ պատրիարքական պաշտօնը։

Սուլթանի հրամանագիրը Աշըգեանը չանթահարած էր և չէր գիտեր ինչ ընէր, ինչպէս վարվէր։ Եթէ հնազանդէր սուլթանի կամաց և հրաժարականը ետ առնէր, կը վախնար, որ մեռյնեն գինքը, իսկ եթէ հակառակվէր սուլթանի կամաց, պնդէր իր հրաժարականի վրա, պիտի ընկնէր կայսեր աչքէն և նոյնպէս բոլոր աւագանիի աչքէն, բաց ադկէ կը վախնար, որ գրկուէր պատրիարքական ամսականներէն։ Եւ այսպէս չը-փոթած, Աշըգեան չը գիտէր ինչպէս վարուէր, կողբար իր վիճակի վրա, իր բարեկամներէն խորհուրդ, խրատ կը հարցունէր, այս անելանելի, տաժանելի վիճակէն ելք մը կը փնտռէր։ Որքան սուլթանի կամաց կը վախնար հակառակել, նոյնքան կը վախնար ցակոբոսի ըրած սպառնալիքէն, անոր ընկերներէն և մահէն։

Մինչդեռ Աշըգեան կը տանջուէր այս սոսկալի դառն մտածումներով ու հոգերով և չէր կրնար եզրակացութեան մը յանգիլ, երեքշաբթի իրիկուն, ամսոյս 14-ին, դատական գործոց նախարար Բիզդիչան պաշտօնագրով մը ծանոյց Աշըգեանին թէ վեհ. սուլթանը բարեհաճած է ընդունել հրաժարականը։

Աշըգեան վերջապէս կազատի իր տաժանելի, անորոշ վիճակէն և ազատ չունչ մը կառնի, որովհետև թէ մահէն ազատեցաւ, թէ կայսեր և աւագանիի աչքէն չընկաւ և թէ պատրիարքական ամսականներէն չը զրկուեցաւ։

Սուլթանի այս յանկարծական փոփոխութիւնը անգլիական դեսպանին միջամտութեան արդիւնքն է։ Երբ անգլիական դեսպանը կը լսէ, որ սուլթանը հրաման ղրկած է Աշըգեանը անպայման վարել իր պատրիարքական պաշտօնը, միւս օրը կերթայ կայսերական պալատ, տեսակցութիւն մը կունենայ և կը յաջողի համոզել սուլթանը, որ ընդունի պատրիարքի հրաժարականը, հակառակ պարագային իրերու ներկայ ընթացքը և յարակից պարագաները ի նկատի ունենալով, կրնայ շատ ծանր հետևանքներ առաջ գալ, եթէ ազգին ատելի դարձած պատրիարքը վերստին պատրիարքական գահ բարձրանայ։ Դեսպանին կը յաջողի համոզել սուլթանը, որը երեկոյին կը ստորագրէ հրաժարականը և դատական գործոց նախարարին կուղարկէ։

Աշըգեան երէկ կէսօրին կայսերական պալատ գնաց և ընդունուեցաւ առաջին սենեկապետ հաճի Ալի պէյէն։ Աշըգեան իր երախտագիտական զգացումները յայտնելով, չնորհակալութեան ուղերձ մը յայտնեց սենեկապետ պէյին՝ խնդրելով մատուցանել կայսերական գահուն ոտքը։ Կայսերական պալատէն այցելեց եպարքոս Ճէվատ փաշային, դատական գործոց և ոստիկանութեան նախարարներուն։ Այս տեսակցութեանց մէջ Աշըգեան չնորհակալութիւն յայտնած է իր պատրիարքական պաշտօնավարութեան միջոցին կայսերական կառավարութեան կողմէ իրեն նկատմամբ ցոյց տրուած բարեացակամութեան համար։

Կայսերական պալատ գացած ատեն շատ պաղ ընդունելութիւն ըրուած է Աշըգեանին, իսկ եպարքոսը և միւս նախարարները հաղիւ քանի մը վայրկեան խօսած են հետը։ Այս պաղ ընդունելութիւնը շատ վատ ազդած է Աշըգեանի վրա և կիսակենդան դարձած է տուն։ Աշըգեան կը վախնայ թէ զրկուի պատրիարքական ամսականներէն, որմէ չը զրկուելու համար ամեն բան ըրաւ, մինչև իսկ իր երդմանը դրժեց։

Սուլթանի թէզքէրէի մէջ ի միջի այլոց ըսած է, որ իսկոյն խառն ժողով կազմեն և ձեռնարկեն պատրիարքի ընտրութեանը։

Պատրիարքութեան համար կառավարութեան ընտրելին Պրուսայի նախկին առաջնորդ Բարդու-

դիմէոս եպիսկոպոս Զամչեանն է, որը յայտնի է իր թուրքամոլութեամբ։ Բարդուղիմէոսը շատոնց աչքը տնկած է պատրիարքական գահի վրա և պատրիարքութեան հասնելու համար թէ անցեալի մէջ մեծ ճիգ ու ջանքեր ըրած է և թէ այժմ կընէ։ Այլ ու ձախ մեծամեծ խոստումներ կընէ, մեծամեծ յոյսեր կուտայ, իր լայն ծրագիրը կը բացատրէ, մէկ խօսքով ամեն ջանք կընէ ժողովրդականութիւն ստանալ, քուէներ վաստկել և իր երկար ժամանակէ ի վեր երազած ու փափաքած պատրիարքական գահը բռնելու։ Եւ բաւական յաջողած կերևի Բարդուղիմէոսի ընտրութիւնը, մինչև իսկ ամենահաւանական և միակ ընտրելին կը թուի առ այժմ պատրիարքութեան համար։

Մինչև իսկ անոնք, որ ցարդ հակառակած են Բարդուղիմէոսի պատրիարքութեան, այժմ անոնք ևս փոխած են իրենց համոզումները—եթէ երբէք համոզումով են գործած—և միակ յարմար պատրիարքացու Բարդուղիմէոսը կը ցուցնեն։

Այս մասին առ այժմ այսչափ, միւս անգամ կը խոստանանք նորէն դառնալ այս հարցին։

Անստորագիր նամակներու համար ձերբակալուած ժամկոչները արձակուեցան, բացի Սամաթիայի, Կէսիք-փաշայի, Գում-Գափուի և Ս. Խաչ եկեղեցիներու ժամկոչները, որոնք տակաւին բանտն են. ատոնց միակ յանցանքն սիվազցի ըլլալն է, որովհետև Սիմոն պէյի սպանել ուզողները սիվազցի են։

Խ—րով

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Պէշտում չուտով կը քննվի մի դատաստանական գործ 42 բումինացի ուսանողների դէմ։ Այդ ուսանողները մեղադրվում են այն բանում, որ ագիտացիա էին անում մագիարական ազգութեան դէմ։ Նոյնպիսի դատաստանական գործ սկսվելու է և Կլաուզենբուրգում՝ մի քանի տասնեակ բումինացի գիւղացիների դէմ։

—Սերբիական Ալէքսանդր թագաւորը հասաւ Կ. Պոլիս յունիսի 15-ին (27-ին)։ Նրան դիմաւորեցին՝ մեծ վիզիրը, պալատականները, զինուորականները, և բազմաթիւ ժողովուրդ։ Ի պատիւ թագաւորի հանդիսաւոր ճաշ տրվեց, որին ներկայ էին, ի միջի այլոց, եգիպտական խէդիվը, մեծ վիզիրը և սերբիական դեսպան Գէօրգիեվիչ։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Զօլա նոր մի բոման է գրում, որ կրում է «Հոմ» վերնագիրը։ «Pays» լրագրի աշխատակիցներից մէկի խօսքերով, այդ վէպում հեղինակը մտադրութիւն ունի նկարագրել եկեղեցու կռիւը ժողովրդի զարթնող ինքնաճանաչութեան դէմ։ Նա կը նկարագրի այն բոլոր ջանքերը, որ արել է և անում է եկեղեցին իր հնացած դօգմաները հաստատելու համար ժամանակակից քաղաքական և գիտական շարժման հետ։ Այդ վէպի մէջ հեղինակը ուզում է նկարագրել պապերի կռիւը իրանց անհնազանդ հօտի դէմ՝ մի ամբողջ դարու ընթացքում։

* *

Բերլինում այս օրերս մի նոր լրագիր պէտք է հրատարակվի երեք լեզուներով—ֆրանսերէն, գերմաներէն և անգլիերէն, որի բոլոր սիւնեակները նուիրված կը լինեն ամուսնական հարցին։ Անգլիական լրագիրը կանուանվի «Ամուսնական նորութիւններ ամբողջ աշխարհից»։

## „ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յունիսի։ Բօրսա. կալուածական բանկերի գրաւական թղթեր.—Թիֆլիսի՝ 6% —101½ ր., 5%—101½ ր., Բուենոս-Այրէսի 6%—101½ ր., 5%—101½ ր., Թիֆլիսի քաղաքային կրէդիտային ընկերութեան 5% օբլիգացիաները—99½ ր.։—Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը այս օրերս ճանապարհ է ընկնում՝ տեսնելու ջրային ճանապարհները, սկսելով Մարիինսկայա սիստեմայից։

ՊԱՐԻԶ, 22 յունիսի։ Նոր նախագահի թուղթը համակրութեամբ է ընդունված սենատում և պատգամաւորների ժողովում, նոյնպէս և մամուլի կողմից։ Սոցիալիստական պատգամաւոր Վալիան սկսեց քննադատել թուղթը. պատգամաւորների ժողովում սկսվեց աղմկալի տեսարան, բայց պատգամաւորների ժողովը քուէ տուեց յօգուտ կառավարութեան։—Երէկ նախագահն ընդունեց դիպլոմատիական կորպուսը, որի կողմից ողջունեց նրան պապի դեսպանը։—Կարնօի այրին հրաժարվեց թոշակից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յունիսի։ Երկրագործութեան և պետական կալուածների մինիստրութիւնը նախագծում է հիմնել նահանգական գիւղատնտեսական մասնաժողովներ և բացի դրանից, այն նահանգներում, որտեղ զէմստվոյի հիմնարկութիւններ չը կան, գաւառական մասնաժողովներ։

ԼՕՆԴՕՆ, 22 յունիսի։ Այստեղի եպիսկոպական դեսպանը, խօսելով Բէյտերի գործակալութեան աշխատակցի հետ, ասեց, որ ներկայ տարաձայնութիւնը Եպիսկոպիայի և Չինաստանի մէջ առաջադիմութեան կռիւ է, որի ներկայացուցիչը հանդիսանում է Եպիսկոպիան՝ յետադէմ պահպանողականութեան դէմ, որի ներկայացուցիչն է Չինաստանը։ «Եպիսկոպիան, ասում է դեսպանը, յետ չի կանգնի իր պարտքը կատարելուց, չը նայելով այն արգելքներին, որ յարուցանում է Չինաստանը, որպէս զի փակէ Եպիսկոպիայի ճանապարհը, անկախ անհրաժեշտ վերանորոգութիւնների հարցից։ Եպիսկոպական կառավարութիւնը դիտաւորութիւն ունի պաշտպանել ամեն կողմից իր իրաւունքները Կորէյում, հովանաւորելով բոլոր այժերով Կորէյայի թագաւորութեան անձեռնմխելիութիւնը։ Բանակցութիւնները կողմերի մէջ դեռ ևս շարունակվում են, սակայն Եպիսկոպիան վճռական կերպով կը պնդէ, որ վարչական անհրաժեշտ ռէֆորմներ մտցնվեն Կորէյում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յունիսի։ Յունիսի 19-ից մինչև 21-ը Պետերբուրգում հիւանդանոցներ են մտել խօլերայով հիւանդ 15 տղամարդիկ և 6 կանայք։

ՍՕՖԻԱ, 23 յունիսի։ Այստեղ ընտրողների ժողով կայանալուց յետոյ, ամբոխը ցոյցեր արաւ Ստոիլովի և Բաղիսլավովի անների առջև. ապա ամբոխը գնաց դէպի Ստամբուլովի տունը, որին շուացրեց, իսկ «Свободно Слово» խմբագրութեան առջև աղաղակում էր. «Կէցցէ իշխանը, կորչի Ստամբուլով։»

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունիսի։ Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհին, Մեծ Իշխանուհի Կսենիա Ալէքսանդրովնա, Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչ և Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչ ճանապարհ ընկան այսօր ֆինլանդական կղզիները։—Հոկտեմբերին հրաւիրվում է զէմստվոյի հիմնարկութիւնների ներկայացուցիչների համագումար ժողովը՝ զէմստվոյի հարկերին վերաբերեալ կանոնադրութիւնը մշակելու համար։

ՊԱՐԻԶ, 24 յունիսի։ Պէտան պահանջում է ներումն գործադուլների պատճառով դատապարտվածներին և մամուլի միջոցով արած յանցանքների համար. մի և նոյն ժամանակ պնդում է, որպէս զի այդ պահանջը անյետաձգելի համարվի։ Պատգամաւորների ժողովը մերժում է անյետաձգելիութիւնը, որի դէմ բողոքում է ծայրայեղ ձախակողմը։ Վալիան պատճառաբանում է իր հարցապնդումը այն միջոցների մասին, որոնք ընդունված էին, որպէս զի խանդարէ ցոյցերը կոմունարների գերեզմանի վրա Պէր Լաշէզ գերեզմանոցում։ Դիւպիի պաշտպանում է ձեռք առած միջոցները և աւելացնում է. «Մենք չենք կարող լսել կոմունայի պաշտպանութիւնը, երկիրը սարսափ և զզուանք է զգում՝ կոմունայի մասին մտածելիս։ (Ծափահարութիւններ)։ Վալիան մըցնում է հերթական հարցերին անցնելու ձևակերպութիւնը, որով առաջարկում է կառավարութեանը թոյլ տալ յարգանք 1871 թի մեռածներին։ Այդ ձևակերպութիւնը մերժվում է 470 ձայների մեծամասնութեամբ 65-ի դէմ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ
„ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ“
վէպը
Վաճառվում է հեղինակի մօտ. Тифлисъ, Ширванзадэ. Գինն է ճանապարհածախսով 1 ր. 50 կոպ։ (№ 72) 1—10

Տալիս եմ ֆլէյթի դասեր եւրոպական ձայնագրութիւնով. նոյնպէս կազմվում է հայկական օրկէստր։ Դիմել Կարապետ Աշնաւուրեանցին. Хлѣбная площадь, Петхаинскій переулокъ, домъ Гарсояна № 8, (№ 73) 1—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, ժընէվի համալսարանի Հասարակական գիտութիւնների ֆակուլտէտը աւարտած, ԿԱՄԵՆՈՒՄ է ՊԱՏՄՈՒԹԵԱՆ կամ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ ունենալ հայոց հոգևոր դպրոցներից մէկում։ Պայմանների համար մինչև օգոստոսի 1-ը դիմել „Մշակի“ խմբագրատուն, յանձնելու Վ. Փափազեանցին։ (№ 68) 4—5

ՄԻ ՕՐԻՈՐԴ
Յանկանում է տնային վարժուհու պաշտօն ունենալ ամառանոցներում, հայ ընտանիքում։
Հարցնել, Եփրեմ Ծատուրեանի լամպային խանութում։ (№ 66) 3—3

Այս տարվայ յուլիսի 1-ից, Գոլովինսկի պրոսպէկտի վրա, Բէյտերի տանը գտնվող ՄԱԳԱԶԻՆԸ ԵՒ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ ԱՆՑՆՈՒՄ ԵՆ Ա. Փարսադանովի տանը, Միքայէլեան կամուրջի վրա „Ա. Ն. Փարսադանովի և ընկ. պատրաստ կօշիկների գործարան“ ֆիրմայի ներքոյ Ա. Տէր-Զաքարեանի անձնական վերահսկողութեան տակ, և այդ պատճառով շտապում եմ հաղորդել իմ պ.պ. մշտական պատուիրողներին և պատուիրողուհիներին և յոյս ունեմ, որ կը շարունակեն ինձ պատուէրներ տալ։
1—3 (№ 72) Յարգանքով՝ Տէր-Զաքարեան

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒՍԵՌԻԱՆ ԶԱՆՑՀԱՄԱՐ
ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական տնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլոլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը, № 9, Սերգիևսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.
№ 62 7—32

Ի ԵԱ. ԲՐՕՆ ՖՕՆ ԲՐԵՆՆԷՐ
Ցանձն է առնում ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ, ԳՐԱՍԵՆԵԱԿԻ և ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՄԱՏԵԱՆՆԵՐ պահելու գործը ամբողջ տարվայ ընթացքում, ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, հայերէն և ուրիշ լեզուներով. ստուգում է զանազան առևտրական և արդիւնաբերական հաստատութիւնների հաշիները և մատեանները, քննում, փակում, բանում, և կազմում է առևտրական մատեաններ. ընդունում է առևտրական մատեանների զանազան թիւրիմացութիւնների քննութիւնը և բացատրութիւնը։
Այն անձինք, որոնք չունեն հաշուապահներ, բայց ցանկանում են ունենալ կանոնաւոր հաշուապահութիւն, կարող են ունենալ ՁԻԾԴ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՆՑ ԳՈՐԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԿԱՆՈՆԱՒՈՐ ՄԱՏԵԱՆՆԵՐ։ Մատեաններ պահելու համար վերցվում է տարեկան 100 ռուբլի և աւելի։ Հասցէն Елизаветинская, № 25, ոստիկանական վարչութեան վերին յարկում։
Ուսուցանում է։
ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԱԳԱԳՐՈՒԹԻՒՆ
Վճար { Հաշուապահութեան ամբողջ կուրսի համար (2—3 ամիս) 40 ՌՈՒԲԼԻ
Արագագրութեան տեսական կուրսի համար (2 ամիս) 50 ՌՈՒԲԼԻ
Պարապմունքներ լինում են ամեն օր, երկու ժամվայ ընթացքում։ Առաջադէմ պարապմունքների համար ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ բէալական դպրոցի դիրեկտորից և ուրիշ անձերից։ (№ 16) (շ) 19—100

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА
HOTEL NIEMIEŁCKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նօմէրներ որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման։ Նօմէրների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով։ Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվարձ։ Կայ բէստորան, տելեֆոն, քաղցրեղէնների խանութ, բաղնիքներ։
Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում։
(№ 21) 88—130 (շ.)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ՏԷՐ—ՅԱԿՈՎԲԵԱՆԻ
Ընդունում է երեխեկ, կիսաթոշակաւոր և թոշակաւոր աշակերտներ։ Պատրաստում է կլասիքական գիմնազիայի, բէալական ուսումնարանի, կադէտների կորպուսի և այլ միջնակարգ ուսումնարանների համար։
Թիֆլիս, Գանօվսկայա փողոց, № 11, սեփական տուն։
(№ 35) (եր. և շ.) 25—25

ՄԻԶՈՑ ԽԱՐԲՈՒԽԻ ԴԷՄ
բժշկական դէպարտամէնտից թոյլատրված
ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈԴԻ-ԼԻՆ
Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ
Ծախվում է 40 կոպէկով
Դեղագոլ ծական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլիսում։
№ 128 (91 թ.) 25—40

Дозволено цензурою, Тифлисъ, 24 Іюня 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 22.